Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

գյուղ Սոթք

Տեղի ունեցավ Գեղարքունիքի մարզի Սոթք համայքի ղեկավարի 2011թվականի աշխատանքային հաշվետվությունը՝ հաշվետվությանը մասնակցում էին համայնքի ավագանու անդամները, Սոթքի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցները և համայնքի բնակիչները:

Սոթք համայնքի ղեկավար Կ. Շահսուվարյանը համայքի բնակիչներին ներկայացրեց Սոթք համայնքի վարչական տարածքում ընդգրկված հողատարածքները ըստ գործառնական և նպատակային նշանակության՝

1. այն է՝

Անվանում	Հա	Որից ջրովի	Համայնքային	Պետ ֆոնդ
Վարելահող	1974.5	00	1901.7	72.80
Խոտհարք	694.7	00	402.0	292.7
Արոտ	3484.7	00	1176.6	2308.0
Այլ հողատ.	122.0	00	76.9	45.2
Ընդամենը	6275.9	00	3557.2	2718.7

2. Համայնքի բյուջեն՝

Համայնքի բյուջեի պլանային մասը կազմում է 32676.0 դրամ, իսկ կատարողականը կազմում է 56460.360 դրամ, պլանային առաջադրանքները կատարվել են 172.8 տոկոսով՝ այսինքն, պլանային առաջադրանքները բոլոր հոդվածներով գերակատարվել է, բացի հողի հարկից, որը կազմում է 76.6 տոկոս:

3. 2011 թ. ընթացքում համայնքի վարչական սահմանների ներսում և սահմաններից դուրս գտնվող հողերից վարձակալական հիմունքներով վարձակալության պայմանագիր է կնքվել թվով 12 համայնքի բնակիչների հետ, շուրջ 120 հա: Համայնքի բնակչության և գյուղապետարանի շահերին առնչվող հարցերի վերաբերյալ տրվել է համայնքի ղեկավարի 44 հրաման և 19 որոշում:

4. 2011 թ. ընթացքում համայնքի ավագանին հրավիրել է 15 նիստ, որից 4 արտահերդ, որի ընթացքում քննարկվել է համայնքային նշանակության բազմաթիվ խնդիրներ, որոնց մեծ մասը մինչև տարեվերջ կատարվել է: Կայացվել է ավագանու 28 որոշում:

5. Համայնքում 2011 թ. կատարվել է մի շարք աշխատանքներ, որոնցից ամենակարևորներն են՝ դպրոց 5-րդ մասնաշենքի սեփականացումը և համայնքի ջրագծի նախագծահաշվարկային պլանի կազմումն է: Համայնքի բնակչության շրջանում իրականացվել է դրամական օգնություններ սոցիալական ծրագրով և

նույն ծրագրի շրջանակներում վերանորոգվել է բնակչին պատկանող մեկ վթարային բնակարան: կատարվել են տարբեր միջոցառումներ, որի ընթացքում առիթ հանդիսացող անձինք և ընտանիքի անդամները ստացել են հուշանվերներ և մասնակցել են տոնական ճաշկերույթներին, ամանորի կապակցությամբ համայնքում կազմակերպվել հանդես, որին մասնակցել են բնակչության մեծ մասը, որի ավարտին համայնքի մանուկներին և միայնակ ծերերին տրվել է տոնական նվերներ:

6. 2012 թ. նախատեսված սոցիալտնտեսական ծրագրերից առջնայինն է համայնքի ջրամատակարարման և գազաֆիկացման աշխատանքները, որից առաջինի դեպքում ունենք պատրաստի նախագիծ, նախահաշիվ և հովանավոր, իսկ գազաֆիկացման դեպքում պետք է կազմվի նախագծահաշվարկային պլան, նույնպիսի աշխատանքներ պետք է տարվեն դպրոցի 5-րդ վթարային մասնաշենքի վերակառուցման և մանկապարտեզի վերափոխման համար, որոնց շինարարական աշխատանքները պետք է ավարտվի 2012թ. 4-րդ եռամսյակում:
Սոթքի գյուղապետարանի 2012թ. բյուջեի պլանային առաջադրանքը նախատեսվել է վարչական մասը՝ 85785.9 դրամ, ֆոնդային մասը՝ 25900.0 դրամ:

Համայնքի ղեկավար՝ Կ. Շահսուվարյան